


Գ. Ա. Ա. ԶԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻՆ, ՅԵՎ ԽՆԱՄՔՈՎ
ԶՐԵԼ
ԲԱՄԲԱԿԻ ԴԱՇՏԵՐԸ



ԲԱՄԲԱԿԻ ԶՈՒՐԸ

Վոռոգվող շրջաններում ջրելք մի հզոր միջոց ե բույսերի բերքատվությունը բարձրացնելու համար:

Հայաստանի բամբակացան շրջաններում մթնոլորտային տեղումներն այնքան քիչ են (մոտ 250 մ.մ.) և նրանց դասավորությունը տարվա տարբեր յեղանակներին այնքան աննպաստ, վոր առանց արհեստական վոռոգման բամբակի մշակությամբ զբաղվել չի կարելի: Դրա հետ մեկտեղ մեզ մոտ լինում են դեպքեր, յերբ գյուղացիներն իշարն են գործ դնում իրենց տրամադրության տակ յեղած ջուրը և այնքան են ջրում բամբակը, վոր դրանից բույսերը դեղնում են, նրանց արմատները հողում զգում են թթվածնի պակաս, վորի հետևանքով տեղի յե ունենում ծաղիկների և կոկոնների վիճում: Բացի այդ վնասից, նրանք դրանով անարդյունավետ կերպով են ծախսում ջրային ռեսուրսները, ուստի ե ընդհանրապես վնաս են պատճառում մեր ժողովրդական տնտեսությանը: Ահա այդ սխալներից խուսափելու համար անհրաժեշտ ե իմանալ, թե ինչ ձևերով և յերբ պիտի ջրել բամբակը:

ԶՐԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

Բամբակի ջրելու մի քանի ձևեր գոյություն ունեն (ակոսներով, սովորական մարգերով, «լաքաններով» և այլն), սակայն դրանցից մեզ մոտ 2-Ն ունեն առայժմ զործնական նշանակություն: Դրանցից մեկը մեր սովորական ձևով

մարգերի վրա ջուր բաց թողնելն եւ մյուսը՝ ակոսներով
ջրելն եւ:

Մարգերով ջրելը դորձադրվում եւ այն տեղերում, ուր
հողի մակերեսը հարթ եւ Զգալի թեքություն և անհար-
թություն լինելու դեպքում այս ձեռվ ջրելը վնաս եւ այն
պատճառով, վոր արտի խոնավացումը տեղի յեւ ունենում
անհավասար, բամբակի զարգացումը ևս նման պայմաններում
անհավասար եւ կատարվում մեկ տեղում լավ, մյուս տե-
ղում վատ: Այս դրությունն ավելի ևս վատթարանում եւ,
յերբ մարգերը շատ յերկար են լինում: Այդ եւ պատճառը,
վոր մեզ մոտ զյուղացիները յերկար մարգեր չեն շինում,
ծուռ ու մուռ թումբեր են անում, «կոճակներ» են տալիս
և զիմում են մի շարք այլ միջոցների՝ արտը հավասարա-
պես ջրելու համար:

Շատ կարծ մարգեր շինելու դեպքում ել, ջուրը լավ չի
ծծվում հողի մեջ և բամբակը վրանից տուժում եւ:

Ջրելու նման ձեն ունի մի քանի ուրիշ բացասական
կողմեր ևս, վորոնցից զլվագորները հետևյալներն են.

1. Տեղի յեւ ունենում ջրի դգալի գոլորշիացում հողի
մակերեսից ջրելուց հետո՝ կեղևակալման հետևանքով:

2. Նույն պատճառով դժվարանում եւ գաղափոխանա-
կությունը, վորը պատճառ եւ դառնում բույսերի թույլ
դրդացման:

3. Ավելորդ աշխատանք է գործադրվում հողը հարթելու
վրա ցանքից առաջ և տափանի վրա՝ ցանքից հետո, վորը
միաժամանակ նաև հողի փոշիացում եւ տուաջացնում:

Այս ձեն ունի սակայն նաև վորոշ զրական կողմեր,
այն եւ:

1. Ջրելու պրոցեսը կատարվում եւ արագ:

2. Աղակալած հողերը լվացվում ու ազատվում են հողի
վերին շերտը բարձրացած ավելորդ և վնասակար աղերից
(բացի բարձր տեղերից):

Ջրելու յերկրորդ և ամենալավ յեղանակը համարվում
է ակոսներով ջրելը: Այս ձեռվ ջրելու համար ամեն անգամ
ջրելուց առաջ շարքերի մեջ կուլտիվատորով կամ բուկլի-
ցով պիտի բաց անել ակոսներ, և նրանց միջով բաց թող-
նել ջուրը:

Ջրելուց մի քանի որ հետո, հողի քեշը յեկած ժամա-
նակ, պիտի կատարել հողի փիրեցում և մոլախոտերի
բաղնան:

Այս աշխատանքը պիտի կատարել այնքան ժամանակ,
մինչև վոր բամբակին ածի ու լցնի իր շարքերը:

Սովորաբար վերջին փիրեցումը մեզ մոտ կատար-
վում է ոգոստոսի Հ-ըդ կեսին, և այդպիսով առանց փիրեց-
ման մնում է միայն մեկ ջուր:

Ջուրն ակոսներով պետք եւ բաց թողնել բարակ և
թույլ հոսանքով: Այդ բանն ավելի կարեոր եւ ջրելու սկզբ-
ում: Աստիճանաբար ջրի հոսանքը կարելի յեւժեղացներ
յերբ այն հասել եւ արդեն ակոսի կեսերին: Թույլ հոսան-
քի դեպքում ջուրը ծծվում է հողի մեջ ավելի խոր և աս-
տիճանաբար, հողի կնծիկների քայլքայում և փոշիացում շատ
քիչ եւ լինում: Ակոսի կողքերը նույնպես աստիճանաբար են
խոնավանում և չեն քանդվում ջրի ուժեղ հոսանքից:

Ուժեղ հոսանքի դեպքում ակոսների կողքերի և հա-
տակի հողի մասնիկները փշրվում փոշի յեն՝ դառնում, վորի
պատճառով ջուրը մեծ դժվարությամբ եւ ներծծվում հողի
մեջ:

Համեմատաբար ջրի մեծ հոսանք կարելի յեւ անել
թեթև, ավագալին և թափանցիկ հողերում: Բնդիակառակը՝
ծանր կավալին և գժվարաթափանց հողերում հոսանքը
պիտի լինի թույլ: Թույլ հոսանք պիտի լինի նաև անհարթ
և թեքություն ունեցող հողերում, հակառակ գեղքում
ջրելը կդառնա մի անմիտ և վնասակար գործողություն:

Ուժեղ թեքություն ունեցող հողերում ակոսները պի-



տի բաց անել թեքությանն ուղղահայաց և ջուրը բաց թողնել թույլ հոսանքով:

Այս ձեմի վոռոգման դրական կողմերից գլխավորները հետեւյալներն են.

1. Հողի խոնավացումը կառարփում է հավասարապես:

2. Ստացվում է թույլ կեղև, վորի հետևանքով բույսի զարգացման կարեոր պայմանները (ջուրը, ոդը, մննդանութերը) գտնվում են լավագույն վիճակում:

3. Ակոսներով ջրելք տալիս ե բերքի զգալի հավելում, առանձնապես այդ հավելումը նկատելի յե չորային և անքարենպաստ տարիներում:

Ակոսներով ջրելու դեպքում ակոսի վերին մասը պիտի ամրացնել, իսկ վերջին մասում պիտի շինել ավելորդ ջուրը դուրս առնող առու (ջրհավաք առու): Զուրն ակոսով պետք ե հոսի այնքան ժամանակ, մինչև վոր թմբերը սեփանան:

Մեզ մոտ տեղի դիմքով և հորային առանձնահատկություններով բոլոր հողերն ել հարմար չեն ակոսային վոռոգման համար, ուստի ակոսաջուր կատարելու համար անհրաժեշտ ե ազդոնոմի հետ միասին ընտրել հարմար հողեր:

Հետաքրքիր ե այժմ պարզել, թե բամբակի զարգացման վրա շրջանում և քանի անդամ պիտի ջրել ցանքերը:

ԶՐԵԼՈՒ ՍԻԵՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԹԻՎԸ

Վոռոգման տեսակետից (ինչպես և ընդհանրապես) բամբակի կյանքի ընթացքը բաժանվում է 3 շրջանի. 1. ցանքից մինչև ծաղկելը, 2. ծաղկելուց մինչև հասունանալը (կնքուղների բացվելը) և 3. հասնելուց մինչև վերջ:

Առաջին շրջանը մեր պայմաններում տևում է մինչև 60—70 որ, 2-րդ շրջանը՝ 60—65 որ. Բամբակենին այդ տարբեր շրջաններում զարգացման տարբեր տեմպեր ունի,

ուստի վոռոգումն և այնպես պիտի կարգավորել վոր բամբակենին բավարարված լինի ջրով համաձայն բույսի կենսաբանական պահանջներին՝ պահանջված ժամանակ և պահանջված քանակությամբ. Պահանջից ավելի ջուր տալու դեպքում ուժեղ չափով աճում են բամբակենու վեգետատիվ մասերը, քիչ կոկոններ են ստացվում, ուշանում են նրա ծաղկելն ու հասունանալը, դրա հետևանքով ել պակասում է բերքը. Մաղկելուց առաջ և ծաղկելու շրջանում պակաս ջուր տալու դեպքում բույսը զարգանում ե անբավարար, տեղի յե ունենում կոկոնների և ծաղկների զգալի կորուստ և դրանից դարձյալ պակասում է բերքը:

Բամբակենու զարգացման առաջին շրջանում ավելի քիչ ջուր ե պահանջվում, քան 2-րդ շրջանում, վորովհետեւ ա, դ շրջանում համեմատաբար քիչ ջուր ե ծախսվում գուրշիցման միջոցով թե հողի և թե բույսի կողմից: Առաջին ջուրն ուշացնելու միջոցով մենք պայմաններ ենք ստեղծում բամբակենու արմատներին խոր թափանցելու հողի մեջ և այդպիսով հետագայում շոգ ամիսներին ավելի հեշտությամբ ջուր վերցնելու հողի խոր շերտերից: Հունիս ամսից սկսվում են շոգերը, բամբակենու աճն սկսում է ուժեղանալ, ուժեղանում ենակ նրա տրանսպիրացիան: Այդ ժամանակ սկսվում է նաև բույսի ճյուղավորումը և կոկոններ տալը: Այսպիսով՝ մի կողմից հողի խոնավությունն ե պակասում շոգերի պատճառով և մյուս կողմից բույսի պահանջն ե մեծանում: Ահա այդ շրջանը, վորը համարվում է բույսի զարգացման պատասխանատու շրջան երիշ մեկը, ընկնում ե հունիսի առաջին կեսին, հետևապես բարակի առաջին վեգետացիոն ջուրը պիտի սկսել հունիսի 1-ին կեսից և վերջացնել վերջին դեկտեմբերից: Մինչև ծաղկելը վորոշ հողերում բամբակը պիտի ջրել մի անգամ ևս (հունիսի 25-ից մինչև հուլիսի 15-ը), նամանավանդ, յերբ բամբակը շատ ուժեղ կերպով ծարավել ե: Դա առաջ ե բերում վեգետացիայի վորոշ արագացում և բերքի բարձրացում,

Մինչև ծաղկելը բոլորովին չջրված բամբակն իր բոլոր մասերի զարգացման տեսակետից հետ ե մնում մեկ կամ յերկու ջուր ստացած բամբակից: Այդ տարբերությունն առանձնապես նկատելի յե սիմբոլիալ (պտղատու) ճյուղերի և կոկոնների վրա: Սակայն միայն սրանով չի սահմանափակվում ջրի գերը, վորը տրվում ե բամբակին մինչև ծաղկելը: Մինչև ծաղկելը ջուր չստացած բամբակը հետագյում ուշ ել բացվում ե. ընդհանրապես կենսական պրոցեսների ամբողջ ցիկլը մղվում ե դեպի հետ, յերկարում ե վեցետացիան, այսինչ նորմալ ջուր ստացածների կյանքի ցիկլն առաջ ե ընկնում և հասունացումն ել շուտ ե տեղի ունենում:

Բամբակի զարգացման 2-րդ շրջանը ծաղկման շրջանն ե, վորն ընկնում ե մեզ մոտ հուլիսի սկզբից սկսած և տեղվում ե մինչև ոգոստոսի յերկորդ կետը. այդ ժամանակ բամբակնին աճում ե առանձնապես ուժեղ կերպով: Այդ շրջանում մթնոլորտային տեղումներ համարյա թե չեն լինում, ամպամածությունը հազվագյուտ ե, ողերեսութաքանական գործոնների ամբողջ կոմպլեքսը նպաստում ե ջրի ուժեղ գործչացմանը հողի և բույսերի մակերեսից: Այդ բոլորն ստիպում են մեզ այդ շրջանում բամբակը ջրել ավելի հաճախ, քան թե առաջին շրջանում: Ջրի պակասն այդ շրջանում առաջ ե բերում կոկոնների և ծաղիկների վիճում, և ընդհանրապես պտղատու ճյուղերը թույլ են լինում:

Նորմալ ջուր ստացած բամբակենու վրա կնգուղներն ըստ առանձին կոնների դասավորվում են ավելի հավասարապես: Այս հանգամանքն իր հերթին ազդում ե բամբակի բերքի վրա դրական ուղղությամբ:

Վերջին հաշվով բամբակի բերքը կախված ե վոչ թե միայն բույսերի վրա յեղած կնգուղների ընդհանուր թվից, այլ նաև և առաջ նըանից, թե այդ կնգուղների վեր մասն ե բացվում մինչև «շախտաները» և ինչպիսի քաշ ունեն

այդ կնգուղները: Այս իսկ տեսակետից մեծ նշանակություն ունի բամբակենու նկատմամբ ճիշտ ջրային ուժերի պաշտպանելը, վորովհետև մեծապես այդ ուժերիմից ե կախված, ինչպես արդեն ասվեց, կնգուղների գասավորությունն ըստ կոնների, ապա նրանց բացվելը մինչև աշնանային ցըրտերը:

Փորձերը ցույց են տվել վոր՝

1. Ծաղկման շրջանում նորմալ քանակությամբ ջուր տալն ապահովում ե նախքան ծաղկելն առաջացած սիմպոլիալ ճյուղերի զարգացումը և մյուս կողմից նպաստում ե նոր ճյուղեր առաջանալուն:

2. Պակաս ջուրն այդ շրջանում պակասեցնում ե բամբակի բերքի քանակը:

3. Նորմալից ավելի չափով ջուր տալն առաջացնում ե ուշացած ծաղիկներ և կնգուղներ, վորոնք չեն հասնում մինչև ցրտերը և բացասական իմաստով են ազդում բերքի քանակի վրա:

Գործնականորեն, մեզ մոտ, ծաղկման շրջանում, բամբակը պիտի ջրել 15—20 որը մեկ անգամ, իսկ ընդհանենը յերկու-յերեք անգամ:

Բամբակի զարգացման վերջին կամ հասունացման շրջանը մեզ մոտ սկսվում ե ոգոստոսի վերջին կեսից կամ սեպտեմբերի առաջին կեսից: Այդ շրջանում ևս՝ ջրելու հարցը վորոշելիս, շատ կարևոր ե հաշվի առնել հողային և կիմայական պայմանները, և իրեն՝ բույսի ընդհանուր դրությունը:

Եերբ կնգուղների բացումն ակավում ե ոգոստոսի 2-րդ կեսից և նշաններ կան, վոր ցրտերն սկսվելու յեն ուշ (հոկտեմբերի 2-րդ կեսից ուշ), լավ ե տաք յեղանակների գեպքում ոգոստոսի վերջում կամ սեպտեմբերի սկզբում բամբակենուն տալ մի ջուր ևս: Այդ ջուրն անհրաժեշտ է յերիտասարդ կնգուղների կազմակերպման, պտուղների նորմալ զարգացման և հասունանալու, ինչպես, նաև բույսի

կենսական ցիկլը բոլորելու համար (այս ջուրն առանձնապես կախումն ունի հողային և կլիմայական պայմաններից և կարող է կիրառվել միայն թեթև հողերում և չոր պայմաններում):

Փորձերը ցույց են տվել, վրը այն գեպքերում, յերբ նախքան ծաղկելը բամբակենին համեմատաբար քիչ ջուր ե ստացել, նրան կարելի յե քիչ ջրել նաև ծաղկման շրջանում, իսկ 3-րդ շրջանում կարելի յե բոլորովին չջրել: Դա բացարկում է նրանով, վոր քիչ ջրված բամբակենին ունենում է ուժեղ գարգացած արմատային սիստեմ և աման շոգերին կառողանում է ջուր վերցնել հողի խոր շերտերից: Ըստ կամականուակը, յեթե զարգացման առաջին շրջանում բամբակենու համար ստեղծված են յեղել ջրային ուժիմի ոպտիմալ պայմաններ, ապա նորմալ բերք ստանալու համար նույնանման պայմաններ պիտի ստեղծել նաև 2-րդ և 3-րդ շրջաններում:

Հասունացման շրջանում արվող ջուրն ունի նաև այն նշանակությունը, վոր ապահովում է բարձր և գլխավոր ցողունից հեռու ընկած ճյուղերի նորմալ զարգացումը և նրանց պտղաբերությունը: Բարենպաստ տարիներին այդ ուշ առաջացած կնքուղները կարողանում են հասունանալ և ավելացնել բերքի քանակը, իսկ անբարենպաստ տարիներին դրանք պատճառ են դառնում բերքի անկման, փռովիետե գանդաղեցնում են կնքուղների բացումը:

Յենելով մինչև այժմ բերած տվյալներից, կարելի յե տալ աշխատանքների հետևյալ սխեմա:

1. Առաջին ջուրը տալ յերբ բամբակենին ունենում է 4—5 իսկական տերեւ: Դա սկսվում է հունիսի սկզբից և տեղում է մինչև հույս: ամսի մերժը: 5—7 որ ջրտուց հետո կատարել հողի փիրեցում և մոլոսիուերի քաղաքն:

2. Յերկրորդ վնասատացիոն ջուրն սկսել հունիսի վերջն դեկտից և վերջացնել հուլիսի մոտ 15-ին: Դա տեղի յե ունենում ծաղկելու սկզբում և առաջին ջրից մոտ

20 որ հետո: Կրանից հետո քեշի ժամանակ կատարել հողի փփրեցում և մոլախոտերի քաղաքն:

4. Յերրորդ ջուրը տալ 18—20 որ 2-րդ ջրից հետո, և այդ հաջորդականությամբ կատարել մյուս ջրերի և հողի մշակման աշխատանքները:

4. Բոլոր կուտնահսություններում, բոլոր սառնաներում և բոլոր հողային տիպերում կիրառել ջրի միատեսակ թիվ և սխեմա չի կարելի: Մինչև այժմ մեր ասածները վերաբերում են նորմալ միջին պայմաններ ունեցող ցանքերին: Դրանք շարլոն, քարացած, անփոփոխ թվեր չեն և պետք ե փոփոխվեն, կոնկրետացվեն, յեխելով տեղի առանձնահատուկ պայմաններից, որինակ, այն հողերում, ուր ստորյերկրյա ջրերը մոտ են հողի մակերեսին, կարելի յե գործադրել 0—2—1 կամ 1—2—1 սխեման, որու և շուտ չորացող ավաղային հողերում պիտի գործադրել 2—3—1 սխեման, նորմալ տիպի հողերում 1—3—1 կամ 1—3—0 սխեման և այլն: Համաձայն Հողժողկոմատի 1934 թվի հրահանգի, ըստ առանձին սխեմաների վեգետացիոն ջուրը տրվելու յե հետևյալ ժամկետներում:

	1—2—1*)	1—3—1	2—3—1
I վեգետաց. ջուր	20/VI-10/VII	6/VI-25/VII	2/VI-20/VII
II » »	11/VII-1/VIII	26/VI-15/VII	21/VI-9/VII
III » »	22/VIII-2/VIII	16/VIII-3/VIII	10/VIII-27/VIII
IV » »	23/VIII-31/VIII	4/VIII-22/VIII	28/VIII-13/VIII
V » »	—	23/VIII-5/IX վոչ բոլոր հողերում	14/VIII-30/VIII
VI » »	—		31/VIII-10/IX վոչ բայց հողեր.

*) 1—2—1 նշանակում են մեկ ջուր տալ մինչեւ ծաղկելը, 2 ջուր ծաղկման շրջանում (մինչև կնքուղների բացվելը) և 1 ջուր հասունացման շրջանում (կնքուղների բացվելուց հետո):

ԶՐԻ ՆՈՐՄԱՆ

Կարեսը նշանակություն ունի ջրելու ժամանակ նաև ջրի նորման, վորից հաճախ կախված ե արտի հավասարապես խոնավացումը կամ անբավարար ջուրը, իսկ դրան իրեն հետևանք ստացվում ե բարձր կամ պակաս բերք: Նորմաների դերն առանձնապես մեծ նշանակություն ունի մեզ մոտ, ուր բույսի գարգացման ամենավճռական մումենտներում պակասում ե մեր առուների ջրերը և ավելորդ ծախսված նույնիսկ չնշն քանակությամբ ջուրն աններելի հանցանք ե: Բամբակի համար հողի ամենալավ խոնավությունը հավասար է հողի լրիվ խոնավունակության մոտավորապես 60—70 տոկոսին, այդ պատճառով պիտի աշխատել հողի խոնավությունը պաշտպանել դրան մոտ, թեև դա շատ գժվար ե դաշտային պայմաններում: Փորձերը ցույց են տվել վոր վորքան մեծ լինի ժամանակամիջոցը մեկ ջրից մինչև մյուսը, այնքան ել անբարենպաստ վիճակ կստեղծվի բույսերի գարգացման համար: Դրան հակառակ՝ հաճախակի և պակաս նորմաներով ջրելու տալիս ե բերքի հավելում:

Սակայն սրանից գեռ չի կարելի յեզրակացնել, վոր վորքան շուտ-շուտ և քիչ նորմաներով ջուր տրվի բույսերին, այնքան ել մեծ կլինի դրանից ստացված եֆեկտը: Ջրի նորմաներն իշեցնել և ջրելու թիվը ավելացնել կարելի յե մինչև վորոշ աստիճանի, վորից հետո ստացվում է բացասական հետևանք նախ այն պատճառով, վոր հնարավորություն չի լինում հողի հավասարապես խոնավացում կատարել և բացի դա, հաճախակի ջրելը փշացնում ե հողի ֆիզիքական դրությունը, ասածից պարզ ե, վոր պիտի սերտ կապ գոյություն ունենա ջրի նորմայի և ջրելու թիվի միջև, վորը և պետք ե գտնել վորձերի միջո-

ցով ամեն մեկ շրջանի համար առանձին-առանձին (չե՛ վոր այդ բոլորը կախված ե հողային և կլիմայական պայմաններից, սորտից և այլ պայմանների բարդ կապակցությունից):

Փորձերը ցույց են ավել, վոր մեր պայմաններում ամենալավ նորմաներ պիտի համարել 800—1000 խոր. մետր մեկ հեկտարին: Վերջին ջրի ժամանակ պիտի տալ պակաս նորմա, այն 600—800 խոր. մետր:

Սբագրիչ Խ. Այվազյան

Հանձնվել է աթուգրության 1934 թ. հունիսի 23-ին

Մտորագրված է տպագրելու 1934 թ. հունիսի 29-ին

Թույլատրված է. Գլամիտի լիազոր № 273

Հրատ. № 117, պատվեր № 435, տիրամ 2000

ԵՐԵՎԱՆ, ԳԵՂԻՆՉՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

ՀՀ Ազգային գրադարան



NL0936471

1934 - 445

ԳԻՒԸ 10 Կ.

11

27907



Г. АГАДЖАНЯН

Своевременно поливать хлопковые поля

Сельхозгиз

1934

Эривань